ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՄԱՍՆԱԿԻ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի 58-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետարանին իր կարիքների համար ապրանքների մատակարարման նպատակով 2024թ. ապրիլի 5-ին հայտարարված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-24/22 ծածկագրով գնման ընթացակարգի 8-րդ և 9-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ գնման պահանջի դադարման հիմքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՄԱՍՆԱԿԻ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար, «Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում» ծրագրի շրջանակում, Երևան համայնքը կազմակերպել է գնման ընթացակարգ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-24/22 ծածկագրով, որի 8-րդ և 9-րդ չափաբաժիններով նախատեսված երաժշտական գործիքների (կլարնետ in A և կլարնետ in B) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերում, վրիպակի արդյունքում, նշվել է «ունի 18 ստեղն»՝ «ունի 17 կամ 18 ստեղն» բառերի փոխարեն:

Գնման ընթացակարգում հաղթող ճանաչված կազմակերպությունը, սակայն, չի կարող մատակարարել գնման ընթացակարգի նշված չափաբաժիններով նախատեսված երաժշտական գործիքները, քանի որ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված 18 ստեղնի փոխարեն՝ մատակարարվող ապրանքներն ունեն 17 ստեղն: Ընդ որում՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշվել է, որ մատակարարվող ապրանքը պետք է լինի ճապոնական արտադրության Yamaha custom CX կամ ֆրանսիական արտադրության Buffet festival մոդելի, իսկ հաղթող ճանաչված ընկերությունը պատրաստվում է մատակարարել Yamaha custom CX մոդելի երաժշտական գործիքներ, որոնք ունեն 17 ստեղն:

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի հ.168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 04.05.2017 թվականի հ.526-Ն որոշմամբ սահմանված է, որ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համայնքի ավագանու որոշման հիման վրա, ուստի, նշված տեխնիկական բնութագրերով գնման ընթացակարգը 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, առաջարկվում է համարել չկայացած:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ընդունել սույն որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ